Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 23-ի N 867 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՐԱԶԵՆԻ ԵՎ
ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ

1. Հրազեն՝ մարտական և ծառայողական

1.	5,45 մմ տրամաչափի ատրճանակ ՊՄՄ
2.	7,62 մմ ինքնալարվող հատուկ ատրճանակ ՊՍՍ
3.	9 մմ. տրամաչափի ատրճանակ «Մակարով» ՊՄ, «Մակարով» ՊՄՄ
4.	9 մմ ատրճանակ ԳՇ-18
5.	9 մմ ինքնալարվող ատրճանակ ՍՌ-1Մ
6.	9 մմ հատուկ ատրճանակ ՊԲ/6Պ9
7.	9 մմ Յառիգինի ատրճանակ ՄՊ-443 «Գռաչ», ՄՊ-446 «Վիկինգ»
8.	9 մմ օպերատիվ ծառայության փոքրաձավալ ատրճանակ ՕՑ-21 «Մալիշ»
9.	9 մմ ռևոլվեր ՕՑ-01 (ՏԿԲ-0216) «Կոբալտ», «Կոռնետ»
10.	5,45 մմ տրամաչափի ինքնաձիգ ԱԿ-74, ԱԿՍ-74, ԱԿ-74Ն, ԱԿՍ-74ՈՒ, ԱԿ-105,
11.	7,62 մմ տրամաչափի ինքնաձիգ ԱԿ-47, ԱԿ-47Ս, ԱԿՄ, ԱԿՄՍ, ԱԿ-104
12.	Փոքրաձավալ ատրճանակ-գնդացիր ՊՊ-2000
13.	9 մմ Ստեչկինի ատրճանակ-գնդացիր ԱՊՍ
14.	9 մմ ատրճանակ-գնդացիր Կ6-92, Կ6-Մ, ՊՊ-19 «Բիզոն»
15.	9-մմ հատուկ ինքնաձիգ ԱՍ «Վալ»
16.	5,6 մմ տրամաչափի կարաբին օպտիկական նշանացույցով ՏՕՋ-18-01
17.	5,6 մմ փոքր տրամաչափի դիպուկահար հրացան ՍՎ-99
18.	5,45 մմ տրամաչափի ՌՊԿ-74
19.	5,45 մմ տրամաչափի կարաբին Կ-11
20.	7, 62 մմ ատրճանակ ՏՏ
21.	7,62 մմ տրամաչափի ՊԿ, ՊԿՄ, ՊԿՄՍ
22.	7,62 մմ դիպուկահար հրացան ՍՎ-98
23.	7,62 մմ տրամաչափի դիպուկահար հրացան ՍՎԴ, ՍՎԴ-Ս, «Տիգր»
24.	7,62 մմ տրամաչափի կարաբին ՍԿՍ
25.	7,62 մմ տրամաչափի կարաբին ԿՕ
26.	9 մմ հատուկ դիպուկահար հրացան ՎՍՍ, ՎՍԿ-94
27.	12,7-մմ խոշոր տրամաչափի դիպուկահար հրացան Վ-94, ԱՍՎԿ-94, ՕՍՎ-96
28.	26 մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակ ՍՊՇ, ՍՊ-81

29.	15 մմ ազդանշանային փամփուշտ կրակելու համար սարքավորում
30.	Տակտիկական խլացուցիչներ, բոցակլանիչներ, գլխադիրներ
31.	Փողատակի նոնականետ ՊԳ-25, ՊԳ-30
32.	40 մմ նոնականետ ՌՊԳ-7, ՌՊԳ-7Դ
33.	40 մմ ձեռքի նոնականետ 6Գ30ՊԷ
34.	Հաստոցային նոնականետեր ԱԳՍ-17, ԱԳՍ-30
35.	Հրաձգանոնականետային համալիր ՕՑ-14 «Գռազա»
36.	18-մմ ինքնալիցքավորվող հրացանի բազայով հատուկ կարաբին ՄՌ-153
37.	23 մմ հատուկ կարաբին ԿՍ-23, ԿՍ-23Մ
38.	18,5 մմ անփող ատրճանակ ՊԲ-4ՍՊ
39.	Կարաբինի համար խցափող
40.	Հատուկ նշանակության ձեռքի նոնականետ ՌԳՍ-33
41.	Հատուկ նշանակության ձեռքի նոնականետ ՌԳՍ-50Մ
42.	Դյուրակիր կրակող սարքավորում ՈՒՍ-50
43.	Շարժական արձակիչ հաստոցասարք Գնոմ

2. Հրազեն՝ քաղաքացիական (սպորտային)

1.	5,6 մմ տրամաչափի սպորտային հրացան «Ուրալ»
2.	5,6 մմ տրամաչափի սպորտային հրացան ՍՄ-2
3.	5,6 մմ տրամաչափի սպորտային հրացան ՏՕՋ և նրա տարատեսակներ
4.	5,6 մմ տրամաչափի սպորտային հրացան «Բիատլոն»
5.	5,6 մմ տրամաչափի սպորտային ատրճանակ ՄՑՄ
6.	5,6 մմ տրամաչափի սպորտային ատրճանակ ԻԺ-35
7.	5,6 մմ տրամաչափի սպորտային ատրճանակ՝ նպատակային ՏՕՋ-35Մ
8.	5,6 մմ տրամաչափի սպորտային ատրճանակ՝ նպատակային ՄՑ-55
9.	5,6 մմ տրամաչափի սպորտային ատրճանակ (կարճեցված փամփուշտով) ՄՑՈՒ
10.	5,6 մմ տրամաչափի սպորտային ատրճանակ (կարճեցված փամփուշտով) ԻԺ-34
11.	5,6 մմ տրամաչափի սպորտային ատրճանակ ՏՕՋ-35
12.	7,62 մմ տրամաչափի սպորտային ռևոլվոր ՏՕՋ-36, ՏՕՋ-49
13.	7,62 մմ տրամաչափի սպորտային հրացան ԱՎ, ԱՎԼ

3. Ռազմամթերք

1.	5,45 մմ տրամաչափի փամփուշտ ՄՊՑ (7Ն7)
2.	5,45 մմ տրամաչափի փամփուշտ 7Ն6, 7Ն10
3.	5,45 մմ տրամաչափի փամփուշտ 7ՏՋ
4.	5,45 մմ տրամաչափի փամփուշտ 7ԽՋ
5.	5,45 մմ տրամաչափի ինքնաձիգի ցածր անդրադարձային ունակության փամփուշտ
6.	5,45-մմ ինքնաձիգի զրահախոցող գնդակով փամփուշտ (7Ն22)
7.	5,45-մմ փամփուշտ գնդակի նվազացված արագությամբ ՈՒՍ (7ՈՒ1)
8.	5,45-մմ փամփուշտ զրահախոցող միջուկով ԲՍ (7Ն24)
9.	7,62 մմ տրամաչափի փամփուշտ 1943թ. նմուշի
10.	7,62-մմ փամփուշտ 1943 թ. նմուշի զրահախոցող, զրահախոցող-հրկիզող գնդակով
11.	7,62 մմ տրամաչափի փամփուշտ Տ-45 գնդակով 1943թ. նմուշի
12.	7,62 մմ տրամաչափի փուչ փամփուշտ 1943թ. նմուշի
13.	7,62 մմ տրամաչափի դիպուկահար հրացանի փամփուշտ

14.	7,62-մմ զրահախոցող գնդակով հրացանի փամփուշտ ԲՊ (7Ն26)
15.	7,62-մմ զրահախոցող-այրող գնդակով հրացանի փամփուշտ Բ-32
16.	7,62-մմ լուսածիր գնդակով հրացանի փամփուշտ Տ-46
17.	7,62 մմ տրամաչափի ռեվոլվերի փամփուշտ
18.	7,62-մմ հատուկ փամփուշտ ՍՊ-4
19.	7,62-մմ տրամաչափի SS ատրճանակի փամփուշտ
20.	7,62-մմ զրահախոցող-լուսածիր գնդակով հրացանի փամփուշտ ԲՏ-90 (7ԲՏ1)
21.	7,62-մմ զրահախոցող գնդակով հրացանի դիպուկահարի փամփուշտ 7Ն14
22.	9 մմ. տրամաչափի փամփուշտ ՊՄ
23.	9 մմ բարձր խոցելիության գնդակով ատրճանակի փամփուշտ (7Ն21)
24.	9-մմ մետաղական միջուկի գնդակով ատրճանակի փամփուշտ (57-Ն-181Ս)
25.	9-մմ պլաստմասային միջուկի գնդակով ատրճանակի փամփուշտ (ՍՊ-7)
26.	9-մմ էքսպանսիվ գնդակով ատրճանակի փամփուշտ ՊԷ
27.	9-մմ լուսածիր գնդակով ատրճանակի փամփուշտ ՊՏ
28.	9x18-մմ բարձր խոցելիության գնդակով փամփուշտ ՊԲՄ (7Ն25)
29.	9x19-մմ բարձր խոցելիության գնդակով ատրճանակի փամփուշտ ՊԲՊ (7Ն31)
30.	9x21-մմ մետաղական միջուկի գնդակով ատրճանակի փամփուշտ (7Ն29)
31.	ՍՊ-5, ՍՊ-6, ՊԱԲ-9 հատուկ փամփուշտներ
32.	5,6 մմ տրամաչափի փամփուշտ «Յունիոր», «Մնայպեր», «Սիլուետ»
33.	12,7-մմ դիպուկահարի փամփուշտ 7Ն34
34.	Լուսարձակ-ազդանշանային փամփուշտ և հրթիռներ
35.	15 մմ տրամաչափի ազդանշանային փամփուշտ
36.	Նմանակող պայթուցիկ փաթեթներ
37.	Գրոհային նռնակներ ՌԳ-42, ՌԳԴ-5, ՌԳՆ
38.	Պաշտպանողական նռնակներ Ֆ-1, ՌԳՕ
39.	Հակատանկային նռնակ ՌԿԳ
40.	40-մմ ջերմաճնշումային նռնակ ՎԳ-40ՏԲ
41.	60-մմ ջերմաճնշումային ձեռքի նռնակ ՌԳ-60ՏԲ
42.	40 մմ տրամաչափի հակատանկային կրակոց ՊԳ-7 և տարատեսակներ
43.	40 մմ տրամաչափի կրակոց ՎՕԳ-25, ՎՕԳ-25Պ
44.	30 մմ տրամաչափի ՎՕԳ-17, ՎՕԳ-17Մ
45.	հակատանկային ռեակտիվ կրակոցներ ՌՊԳ-22, 27, 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 23-ի N 867 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1. Ակտիվ պաշտպանության միջոցներ

1.	Ռետինե մահակ ՊՌ-73, ՊՌ-73Մ, ՊՌ-89, ՊՌ-90, «Արգումենտ» «Տոնֆա»
2.	Ձեռնաշղթաներ ԲՌ, ԲՌ-Ս, մեկանգամյա օգտագործման ձեռնաշղթա
3.	Գազային ատրճանակներ
4.	Վնասվածքային ատրճանակներ
5.	Գազային ատրճանակի ռազմամթերքներ
6.	Աէրոզոլային փաթեթ «Սիրեն-10», «Սիրեն-10Մ», «Զերյոմուխա-10»
7.	Աէրոզոլային փաթեթ «Ռեզեդա-10», «Ռեզեդա-10Մ», «Զվեռոբոյ-10», «Զվեռոբոյ-10Մ»
8.	Էլեկտրահարող սարքավորումներ (ԷՇՌԻ), «ԷՇՌԻ-200» «ԷՇՌԻ-300», ԶԷՇՌԻ
9.	Ինքնալար կայծային լիցքավորիչ ԱԻՌ-107 տեսակի հեռատարածական գործողության
10.	Ատրճանակի ռետինե գնդակներով փամփուշտներ

2. Հատուկ միջոցառումների իրականացման միջոցներ

1.	Ձեռքի ծխանռնակ ՌԴԳ-Մ
2.	Ձեռքի ուսումնական ծխանռնակ «Զերյոմուխա-6ՈՒ»
3.	Ծխանռնակով կրակոց «Նագան»
4.	Ակնթարթային ծխաքող կազմող ծխային նռնակ ԳԴՄ-40
5.	«Զերյոմուխա-6» «Զերյոմուխա-6Մ» ձեռքի գազային նռնակ
6.	«Սիրեն-6» ձեռքի գազային նռնակ
7.	«Սիրեն-12» ձեռքի գազային նռնակ
8.	«Սիրեն-7» գազային նռնակներով փամփուշտ
9.	Բարձր հզորության գազային նռնակ «Զերյոմուխա-12»
10.	Ձեռքի անբեկոր օդակաթիլային նռնակ «Դրեյֆ», «Դրեյֆ-2»
11.	Համակցված գործողության գրգռող, լուսաձայնային ձեռքի «Տյորեն» նռնակներ
12.	Բարձր հզորության ձեռքի անբեկոր գազային նռնակ «Ռուլետ-ՎՎ»
13.	Ձեռքի գրոհային նռնակ «Կոռոլ»
14.	Այրիչ ծխային փամփուշտ ԶԴՊ
15.	18,5 մմ «ՊԲ-4ՍՊ» զենքի հատուկ փամփուշտներ
16.	23 մմ «Շռապնել-10» և «Շռապնել-25» մանրագնդակ փամփուշտներ
17.	23 մմ դուրս նետող-հրող փամփուշտ ՊՎ-23Մ
18.	23 մմ գազային փամփուշտ «Վոլնա»
19.	23 մմ ռետինե գնդակով փամփուշտ «Վոլնա-Ռ»

20.	23 մմ հատուկ գնդակով փամփուշտ «Բարիկադա»
21.	Նմանակող պայթուցիկ փաթեթներ
22.	Ձեռքի նռնակ «Վյուշկա»
23.	Ձեռքի նռնակ «Վպոիսկ-Պ»
24.	Ակնթարթային գործողության ձեռքի ծխանռնակ (ԳՌԴ)
25.	Արցունքաբեր-գրգռիչ գոծողության նռնակով կրակոց ԳՍ-33
26.	Լուսա-ձայնային գործողության նռնակով կրակոց ԳՍՁ-33
27.	Գազային նռնակով կրակոց «Գվոզդ»
28.	Գրգռիչ գործողության նռնակով կրակոց ՎՌԳ
29.	Տարբեր նշանակության գրգռիչ գործողության նռնակով կրակոցներ ՎԳՄ-93-100, 93-200, 93-400, 93-600, 93-700
30.	Բարձր ճնշման փոշեցրիչներ ՌԲԴ-70, ՌՎԴ-160, ՌՎԴ-250
31.	Բարձր արդյունավետության սրսկիչ «Օվոդ»
32.	Օդակաթիլային փոշեցրիչ ԱՌ-16 (պարկային ապարատ «Օբլակո»)
33.	«Զարյա» լուսաձայնային նռնակ
34.	Անբեկոր լուսաձայնային նռնակ «Զարյա-2»
35.	Ձեռքի լուսաձայնային անբեկոր նռնակ ԳՍՁ-Տ, ԳՍՁ-ՏՇ
36.	Լուսաձայնային նռնակ ԳՍՁ
37.	Բազմաօջախային լուսաձայնային նռնակ «Վզլյոտ-Մ»
38.	Բազմատարր ձեռքի լուսաձայնային նռնակ «Ֆակել»
39.	Միատարր ձեռքի լուսաձայնային նռնակ «Ֆակել-Ս»
40.	«Պլամյա» լուսաձայնային սարքավորում
41.	Լուսաձայնային նռնակ «Պլամյա-Մ», «Պլամյա-Մ2»
42.	Կասեթային բազմատարր հատուկ միջոց «Կասսետա-ՍԴ/ԴՏ/ԿՏ»
43.	Արցունքաբեր-գրգռիչ գործողության նռնակով կրակոց ԳՍ-40
44.	Ակնթարթային գործողության ծխանռնակով կրակոց ԳԴ-40
45.	Լուսաձայնային գործողության նռնակով կրակոց ԱՍՁ-40
46.	40-մմ լուսաձայնային նռնակ ՎԳ-40ՍՁ
47.	Ապահովա-գործարկման մեխանիզմ (պայթուցիչ) ՊՊՄ տեսակի
48.	«Կլյուչ» փոքրածավալ պայթուցիկ սարքավորում
49.	«Իմպուլս» փոքրածավալ պայթուցիկ սարքավորում
50.	Լուսաձայնային գրգռիչ գործողության ձեռքի նռնակ «Դրոֆա»
51.	Ներկող նյութեր
52.	Տրանսպորտային ծխային մոդուլ ԲՏԴ
53.	81-մմ ծխանռնակ ԶԴ6
54.	81-մմ ծխանռնակ ԶԴ6Մ
55.	81-մմ ծխանռնակ ԶԴ17
56.	ԴՄ-11 ծխագլան
57.	Համակցված գործողության ազդանշանային ական (ՄՄԿ-40, ՄՄԿ-40Պ, ՄՄԿ-40ՊԷ)
58.	Ծխագլանակներ լցոնված իրրիտանտի հիմքով հրատեխնիկական բաղադրությամբ
59.	Ինֆրակարմիր ճառագայթման և հակառադիոլոկացիոն շեղումներով հրատեխնիկա-կան միջոցներ
60.	Ինֆրակարմիր ճառագայթման շեղման փամփուշտ ՊՊԻ-50-3
61.	Հակառադիոլոկացիոն փամփուշտ ՊՊՌ-50-17
62.	Ինքնագործարկվող ավտոարգելակիչ «Գառպուն»
63.	Տրանսպորտային միջոցի շարժական արգելակիչ «Լիանա-6000», «Կակտուս»

64.	Մարդկանց շարժը արգելափակող արդիականացված փշալար-ժապավեն «Մեռպանտին»
65.	Արգելափակող գալարներ ԱՍԿԼ-ից
66.	Արգելափակող սարք-հաստոց «Մյատա»
67.	Արգելափակող կցասայլ «Զագռադիտել»
68.	Ձրանետ մեքենաներ Լավինա-Մ, Լավինա-Ուռագան, ԱԲՍ-40
69.	Ձրահամեքենաներ «Տիգռ», ԲՌԴՄ-1, 2, ԲՏՌ-70, 80, ԲՏՌ-60ՊՈՒ
70.	Ծառայողական շներ՝ պահնորդական, հետախուզական, պարեկային

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 23-ի N 867 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

1.	Հակագազ
2.	Մետաղական սաղավարտ ՍՇ-68, ՍՇ-68Մ, ՍՇ-68Ն
3.	Հակահարվածային պաշտպանական սաղավարտ «Մասկա-2»
4.	Հակագնդակային սաղավարտ հանովի դիմածածկով «Մասկա-1»
5.	Հակահարվածային սաղավարտ ՊՇ-97 («Ձետա»)
6.	Հակագնդակային սաղավարտ «Սֆեռա-Ս»
7.	Գնդակադիմակայուն սաղավարտ «Մասկա-3-1»
8.	Տիտանե սաղավարտ Կ6 և «Ռիս» տեսակի
9.	Թափանցիկ դիմածածկով պլաստմասե սաղավարտ ԿՊ-80
10.	Պաշտպանական սաղավարտ ԶՇ-1-2
11.	Տակտիկական զրահաբաճկոն «Մողուլ», «Մողուլ-Մ», «Ռուբին-Բանկ»
12.	Զրահաբաճկոն «Զալում»
13.	Բարձր գնդակադիմակայության զրահաբաճկոն «Բազալտ-ՄԿ»
14.	Թեթև պաշտպանիչ բաճկոն ԺԶԼ-74
15.	Ծանր պաշտպանիչ բաճկոն ԺԶՏ-71Մ
16.	Պաշտպանիչ բաճկոն «Կորա-1», «Կոռալլ»
17.	Զրահաբաճկոն «Կոռա-Կուլոն»
18.	Փամփշտապաշտպանիչ բաճկոն «Միրաժ»
19.	Զրահաբաճկոն «Շտուռմ-ՎՎ» դասի
20.	Գրոհային զրահաբաճկոն «Կոռունդ-ՎՄ»
21.	Քողարկված կրման հատուկ զրահաբաճկոն «Կորա-3»
22.	Հակահարվածային վահան «Վիտրաժ-Ա»
23.	Պաշտպանական զրահահամալիր «Վիզով»
24.	Մարտական մեքենայի անձնակազմի պաշտպանական համալիր (ինդ. 6Բ25)
25.	Հակահարվածային համալիր «Շիտ»
26.	Հակահարվածային վահան «Վիտռաժ-ԱՏ»
27.	Գնդակակայուն վահան «ԲԶՏ-75Ս» և տարատեսակներ
28.	Զրահավահան «Շտուռմ»
29.	Պաշտպանական դիմակ «Ձեռկալո»
30.	Վերջույթների պաշտպանական միջոցներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

11_0867.doc

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 23-ի N 867 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀՐԱԶԵՆԻ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն) սպառազինության մեջ հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակները (այսուհետ՝ տեսակներ) ընդգրկվում և դրանք սպառազինությունից հանվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ) կողմից ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) եզրակացությամբ: Հանձնաժողովը պետք է բաղկացած լինի նվազագույնը 5 անդամից:

2. Հանձնաժողովը եզրակացություն է տալիս Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ նոր տեսակներ ընդգրկելու կամ սպառազինության մեջ առկա տեսակները հանելու նպատակահարմարության մասին:

3. Հանձնաժողովի աշխատանքներն իրականացվում են նիստերի միջոցով:

4. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգով: Հանձնաժողովի նախագահը որոշում է նիստի անցկացման օրը և ժամը:

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների 3/4-ը:

6. Հանձնաժողովը եզրակացություններն ընդունում է ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստին ներկա գտնվողների ձայների հավասար բաշխման դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը համարվում է վճռորոշ:

7. Հանձնաժողովի նիստերի օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերող այլ անհրաժեշտ փաստաթղթեր հանձնաժողովի անդամներին են փոխանցվում նիստից առնվազն 1 աշխատանքային օր առաջ:

8. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են հանձնաժողովի քարտուղարի կողմից:

9. Հանձնաժողովի կողմից կայացված եզրակացություններն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա գտնվող բոլոր անդամները:

10. Եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի անդամն իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք եզրակացության վերաբերյալ, որը կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրությանը:

11. Հանձնաժողովի եզրակացություններն ու նիստերի արձանագրությունները հաշվառվում են հանձնաժողովի քարտուղարի կողմից:

12. Հանձնաժողովի աշխատանքային գործունեությունը կազմակերպում է հանձնաժողովի քարտուղարը:

13. Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ տեսակներ ընդգրկելու նպատակով հրավիրվող նիստի ընթացքում հանձնաժողովն ուսումնասիրում է ներկայացված տեսակի տեխնիկական կանոնակարգերը, նկարագրությունները, շահագործման կանոնները, այլ պետություններում կատարված փորձարկումների (փորձաքննությունների) արդյունքների վերաբերյալ նյութերը, իրավապահ մարմինների կողմից դրանք օգտագործելու մասին տեղեկությունները, առկայության դեպքում՝ նաև տվյալ տեսակը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության

նախարարության կողմից տրված՝ տվյալ տեսակը մարդու նկատմամբ օգտագործելու թույլատրելիության մասին որոշումը (հատուկ միջոցների մասով):

14. Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցի նոր տեսակներ ընդգրկելու հարցը քննարկելիս գրությամբ դիմում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն հատուկ միջոցի տվյալ տեսակը մարդու նկատմամբ օգտագործելու թույլատրելիության մասին որոշում ստանալու նպատակով:

15. Հանձնաժողովի կողմից ներկայացված գրությանը կցվում են հատուկ միջոցի տեխնիկական կանոնակարգը, նկարագրությունը, շահագործման կանոնները, այլ պետություններում կատարված փորձարկումների (փորձաքննությունների) արդյունքների վերաբերյալ նյութերը, իրավապահ մարմինների կողմից դրանք օգտագործվելու մասին տեղեկությունները, իսկ առկայության դեպքում՝ նաև հատուկ միջոցի տվյալ տեսակը:

16. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը հատուկ միջոցի տվյալ տեսակը մարդու նկատմամբ օգտագործելու թույլատրելիության մասին դրական որոշում ընդունում է, եթե տվյալ տեսակը մարդու նկատմամբ ունի առողջության համար ժամանակավոր և անցողիկ, ոչ մահաբեր ազդեցություն և օրգանիզմում չի առաջացնում անդառնալի փոփոխություններ:

17. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը պահանջվող որոշումը հանձնաժողովին է ներկայացնում 30-օրյա ժամկետում:

18. Եթե հանձնաժողովի կողմից եզրակացություն կայացնելու համար անհրաժեշտություն է առաջանում կատարելու փորձաքննություններ, ապա հանձնաժողովն իրավասու է որոշում ընդունել փորձաքննություն նշանակելու մասին և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դրա իրականացումը պատվիրել իրավասու կազմակերպություններին:

19. Եթե Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ գտնվող հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների կամ ոստիկանության ծառայողի

անհատական պաշտպանության միջոցների առանձին տեսակներ հանվել են արտադրությունից, կամ կարող են փոխարինվել մարդու կյանքի կամ առողջության համար առավել նվազ վտանգավոր և արդյունավետ համանման այլ տեսակով, կամ այլևս օգտագործման համար պիտանի չեն, ապա հանձնաժողովը եզրակացություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ տվյալ տեսակը Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինությունից հանելու մասին:

20. Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ նոր տեսակ ընդգրկելու կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ առկա տեսակն սպառազինությունից հանելու համար Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը սահմանված կարգով առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն:

21. Սպառազինությունից հանված հատուկ միջոցները և անհատական պաշտպանության միջոցները Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն են փոխանցվում ընդունման-հանձնման ակտով, որը Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ստորագրում է հանձնաժողովի նախագահը, իսկ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից՝ լիազորված պաշտոնատար անձը:

22. Սպառազինությունից հանված հատուկ միջոցների և անհատական պաշտպանության միջոցների ոչնչացման համար Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը ֆինանսավորում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի միջև ստորագրված վարչական ակտի համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ